**ՍՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԹԱԿ-ԳՀԾՁԲ-25/07**

«23» 10 2024 թ.

ք. Աբովյան

ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն մյուս կողմից, ի դեմս տնօրեն Վահե Հակոբյանի, որը գործում է կենտրոնի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Եղվարդի Նեկտար» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռուբեն Մկրտչյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ... www.procurement.am հասցեով գործող կայքի

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 61991600 (վաթսունմեկ միլիոն ինը հարյուր ինսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում

**5"ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**«Թոքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ**
ք.Աբովյան, Արզնու խճ. 10
«Կենտրոնական գանձապետարան»
ՀՀ 900018005190
ՀՎՀՀ 01243384
Հեռ. +37422220011
ntbccarm@gmail.com
**Տնօրեն Վահե Հակոբյան**

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**«Եղվարդի Նեկտար» ՍՊԸ**
Ք.Եղվարդ, Սաֆարյան 15
«Արարատբանկ » ԲԲԸ
ՀՀ 1510017371551598
ՀՎՀՀ 03307946
Հեռ.098181111
էլ. փոստ՝ exvardnektar@mail.ru
**Տնօրեն՝ Ռուբեն Մկրտչյան**

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«23» 10 2024թ. կնքված
N ԹԱԿ-ԳՀԾՁԲ-25/07 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 55321100/501 | դրամ | 61 991 600 | 1 | ք. Աբովյան, Արզնու խճուղի թիվ 10 | 365 օրացուցային օր |
| տեխնիկական բնութագիրը | | | | | | |

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՀԻԳԻԵՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 34-Ն ՈՐՈՇՄԱՆ համաձայն սննդամթերքի պատրաստում, տեղափոխում և մատակարարում: Մասնավորապես հստակ պահպանվեն սննդամթերքի պատրաստման պայմաններին և տեղափոխման վերաբերյալ նորմերին համապատասխանությունը:**

Սննդի պատրաստման ծառայություններ 80 հիվանդի համար, 365 օրվա համար. մեկ օրվա կիլոկալորիայի պարունակությունը 3300-3600 կիլոկալորիայի, որից 45-60% (մոտ 1485-2160 կկալ) ածխաջրից, 30% (մոտ 990-1080 կկալ) ճարպից, 20-30% (մոտ 660-1080 կկալ) սպիտակուցից:

Յուրաքանչյուր օր, սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը պետք է իրականացվի "Թոքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի Վարակի հսկողության բաժնի ղեկավարի կողմից կազմված և տնօրենի կողմից հաստատված երկու շաբաթվա համար կազմված ճաշացանկի հիման վրա՝ ըստ մթերքի սեզոնայնությամբ: Սննդի մատակարարումը պետք է իրականացվի ըստ ԹԱԿ-ի 04 օգոստոսի 2022թ. N 94-Լ հրամանի, տվյալ օրվա հոսպիտալացված պացիենտների թվի և սահմանված հստակ ժամերի՝ նախաճաշի մինչև 08:30-09:00, ճաշ 13:00-13:30, ընթրիք 17:30-18:00:

Սնունդը պետք է մատակարարվի համապատասխան մեքենայով, որը կապահովի սննդի ջերմային ռեժիմը :

Մատակարարվող սնունդը պետք է լինի առանձնացված (սառը և տաքը իրարից առանձին կամ երկտեղանի տարայով), ապուրները պետք է մատակարարվեն ջեմակայուն մեկանգամյա օգտագործման տարրաներով: Մատկարարը պետք է տրամադրի կողով թվով 10 հատ:

Յուրաքանչյուր սննդի միավոր պետք է փաթեթավորված լինի առանձին սննդի համար նախատեսված տոպրակներով և տարաներով (պատառաքաղ, գդալ փոքր և մեծ, անձեռոցիկ), որոնք պետք է համապատասխանեն ՀՀ Կառավարության 25.05.2005, N679-Ն որոշմամբ հաստատված "Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայի արտադրանքների տեխնիկական կանոնակարգին»:

Տաք սննդի տարաները պետք է նախատեսված լինեն նաև միկրոալիքային վառարաններում օգտագործելու համար:

Մատակարարվող սննդի փաթեթներում ներառված ապրանքները պետք է փաթեթավորված լինեն առանձին՝ սննդի համար նախատեսված տոպրակներով կամ տարաներով, ընդ որում փաթեթներում առկա ապրանքատեսակները պետք է համապատասխանեն ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերին: Տարաները պետք է հերմետիկ փակ լինեն և մեկանգամյա պիտակներով փակցված, որը կարող է բացել միայն վերջնական օգտագործողը: Յուրաքանչյուր սննդի միավորի վրա պետք է առկա լինի պիտանիության ժամկետի մակնշում՝ արտադրման և/կամ լցման ամսաթիվ, ինչպես նաև պահպանման վերջնաժամկետ: Մատակարարվող սնունդը պետք է համապատասխանի տվյալ օրվա սննդակարգին ըստ բաղադրության, արտաքին տեսքի, թարմության, ջերմային ռեժիմի: Ցանկացած չափաբաժին ամսական մեկ անգամ կարող է ենթարկվել ֆիզիկոքիմիական և մանրէաբանական փորձաքննության ըստ

**ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 16 հոկտեմբերի 2014 թվականի N 1142-Ն Որոշման:**

**Մատակարարող աշխատակիցը պետք է կրի պատշաճ համազգեստ ըստ վերը նշված նորմատիվների և սնունդը մատակարարի մինչև սննդի ընդունման բաժին:**

**Հիվանդների քանակը՝ 80**

**Օրերի քանակը՝ 365:**

Մատակարարված սննդի օրական չափաբաժնի /մեկ հիվանդի համար/

«Նախաճաշ» փաթեթը կարող է պարունակել ստորև նշված սնունդներից մեկը կամ մի քանիսը ըստ համապատասխան ճաշացանկի:

1.Հաց-փաթեթավորված սննդի համար նախատեսված տոպրակով:
2.Շաքար/ մուրաբա/ ջեմ/ մեղր/հալվա/ ալրային և շաքարային հրուշակեղեն, -սննդի համար նախատեսված տարրայում:
3.Կարագ - սննդի համար նախատեսված տարրայում:
4.Պանիր - փաթեթավորված սննդի համար նախատեսված տոպրակով:
5.Թեյ – 1գ, փաթեթավորված թեյի համար նախատեսված տոպրակով:
6.Կաթ, կական,
7. հավկիթ
8. կաթնաշոռ

10. մածուն կամ կեֆիր
11.շիլաներ- հնդկաձավար, վարսակ, կորեկաձավար, սպիտակաձավար և այլ ձավարներից:
12. Մրգեր ըստ սեզոնի
«Ճաշ» փաթեթը կարող է պարունակել ստորև նշված սնունդներից մեկը կամ մի քանիսը ըստ համապատասխան հայտի.
1. Հաց - փաթեթավորված սննդի համար նախատեսված տոպրակով:
2. Ապուր – բոլոր տեսակի ապուրները պետք է պարունակեն հավ, տավարի միս՝ ամբողջական կտորներով և զերծ ոսկորներից ու ջլային մասսայից, ձուկ, ձավարեղեն, մակարոնեղեն, ընդեղեն և բանջարեղեն (ըստ սեզոնի) սննդի համար նախատեսված ջերմակայուն տարրայում:
3. Փլավ՝ ձավարեղեն, մակարոնեղեն, ընդեղեն, ինչպես նաև սեզոնային բանջարեղենից պատրաստված ուտեստ
4.Բանջարեղեն/ըստ սեզոնի/՝ թարմ առանձին կամ աղցանների տեսքով
5.հյութեր՝չորամրգերով և հատապտուղներով թուրմ կամ կոմպոտներ ըստ սեզոնի առնվազն 200 մլ
«Ընթրիք» փաթեթը կարող է պարունակել ստորև նշված սննդատեսակներից մեկը կամ մի քանիսը ըստ համապատասխան ճաշացանկի.
1.Հաց-փաթեթավորված սննդի համար նախատեսված տոպրակով:
2. Փլավ՝ ձավարեղեն, մակարոնեղեն, ընդեղեն, ինչպես նաև բանջարեղենից պատրաստված ուտեստ սննդի համար նախատեսված տարրայում:
3. հավ, տավարի միս՝ ամբողջական կտորներով և զերծ ոսկորներից ու ջլային մասսայից, ձուկ, հնդկահավ, որը կարող է մատուցվել խավարտի հետ մեկտեղ
4.Թթվասեր-սննդի համար նախատեսված տարրայում:
5.Կաթնաշոռ-փաթեթավորված սննդի համար նախատեսված տոպրակով:
6.մածուն
7.Թեյ – 1գ, փաթեթավորված թեյի համար նախատեսված տոպրակով, շաքարավազ 20 գ
Փաթեթում ներառված սննդամթերքի **Սննդամթերքների տեխնիկական բնութագրերը**

Հաց
Պատրաստված ցորենի ալյուրից: Բաղադրությունը. աղ, խմորիչ, ջուր: Թողարկումը հատերով,անվտանգությունը՝ըստ N 2-III 4.9-01-2010 հիգիենիկ նոմատիվների և <<Սննդային անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90%:

Հաց տարեկան-առաջին կամ երկրորդ կարգի ալյուրից

Բնական մեղր
Քաղցր, մածուցիկ, առանց շաքարային հավելումների

Հալվա
Յուղի մեջ բոված ցորենալյուրից՝ վրան լցրած դոշաբ, շաքարաջուր կամ մեղրաջուր: պատրաստված յուղատու սերմերից (քունջութ, գետնանուշ, արևածաղիկ, սոյա և այլն)

Պանիր
Պանիր կովի կաթից, աղաջրային , սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46% յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս, քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. Դեկտոմբերի 21 - ի N 1925 - Ն որոշմամբ հաստատված "Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությունը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Ջեմ
Թարմ, տեղական ոչ պակաս 40% մրգերից և պտուղներից պատրաստված, շաքարի օշարակ, կիտրոնաթթու:

Թթվասեր
Տեղական արտադրության : Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20%-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 OT, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. դեկտեմբերի 21-ին N 1925-Ն որոշմամբ հաստատված "Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը նորյացավող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և <<Սննդային անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90%:

Կաթնաշոռ
Կովի նորմալացված կաթ (անարատ կաթ, չոր անարատ կաթ ՝ 4 %, չոր անյուղ կաթ ՝ 3 %),կաթնաշոռի մակարդակ: Մինչև պիտանելիության ժամկետի ավարտը պարունակում է 10 ԳԱՄ/գ կենդանի կաթնաթթվային մանրէներ: Առանց կոնսերվանտների և հակաբիոտիկների: Պիտանելիության ժամկետը 5 օր:

Հավկիթ
1-ին կարգի, հավկիթ սեղանի կամ դիետիկ, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահպանման ժամկետը հում վիճակում 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր, ՀUS 182-99:

Կարագ
Առանց սպեցիֆիկ համերի և հոտերի, սերուցքային, յուղայնությունը՝ առնվազն 82.5%, բարձր որակի, թարմ վիճակում, առանց կողմնակի կամ ու հոտի Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված “Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, պիտանելիությայն մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %:

Հնդկաձավար/գրեչկա/
Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված “Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը հում վիճակում ոչ պակաս քան 70 %

Ոլոռ
Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Ոսպ
Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Ցորենաձավար
Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և ... սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և <<Սննդամթերքի

անվտանգության մասին>> ՀՀ օրենքի, մակնշումը՝ <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Բրինձ

Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-իցմինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.

Մակարոնեղեն

Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի

Միս տավարի

Տավարի միս սպանդանոցային ծագման՝ փափուկ, տեղական արտադրության, առանց ոսկորի՝ ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 0 % և 100 %, զարգացած մկաններով, պահված 0 oC -ից մինչև 4 oC ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Հավի միս

Հավի միս ոչ սառեցված, տեղական արտադրության, կրծքամիս առանց ոսկոր, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Ձուկ/իշխան, սիգ/

Ձկան միս տեղական, ոչ սառեցված առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի:

Հնդկահավ

Հնդկահավի միս տեղական, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Կարտոֆիլ

Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Բուսական յուղ, ձեթ

Արևածաղկի կամ եգիպտացորենի ձեթ, ռաֆինացված, (զտած): Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Լոբի հատիկավոր

Կարմիր տեսակի, նեղ տրամագիծը 0.5սմ-0.8սմ, երկարությունը 1սմ-1.5սմ: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Գազար

Ընտիր տեսակի, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակներ կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Թխվածքաբլիթ

Թարմ, Տարբեր տեսականի, որոնք կարող են պարունակել վարսակի փաթիլներ, չորամրգեչչր-մրգեր:

Տոմատի մածուկ

Բարձր տեսակների, անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Կաղամբ

Թարմ առանց հիվանդությունների, չճզլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով. ձևով ու համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀօրենքի 8-րդ հոդվածի:

Բրինձ

Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.

Աղ

Կերակրի աղ՝ բարձր տեսակի,մանր, յոդացված ՀՍՏ 239-2005 : Տեղական արտադրության կամ համարժեք:

Կանաչի

Կանաչի տարբեր տեսակի՝ խառը: Անվտանգությունը՝ ըստ սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի

Սիսեռ

Չորացրած, ամբողջական, կեղևած, սպիտակ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Մածուն

Մածուն կովի կաթից, տեղական արտադրության: Թարմ կովի կաթից, յուղայնությունը 3%-ից ոչ պակաս, թթվայնությունը 65-1000T,: անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:

Մատակարարված ապրանքների և պատրաստի սննդամթերքում օգտագործվող ապրանքների որակը պետք է համապատասխանի պետական ստանդարտի պահանջներին:

Սահմանված պայմանների խախտման դեպքում Պատվիրատուն պահանջում է ուղղիչ գործողությունների պլան թերությունների վերացման վերաբերյալ ՝ տեղեկացնելուց հետո 24 ժամվա ընթացքում: Սննդամթերքի ոչ պատշաճ մատակարարման դեպքում ... կտրվի համապատասխան ժամանակ շտկման համար:

**Ցանկացած ժամանակ սնունդը կարող է ենթարկվել անկախ մարմնի կողմից փորձաքննության:**
**Կից ներկայացվում է մեկ շաբաթվա ճաշացանկ, որը ենթարկվում է փոփոխության, համաձայն պայմանագրում առկա տեխնիկական բնութագրին և կիլոկալորիային:**

* *Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում*

** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **«Թոքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ** | **«Եղվարդի Նեկտար» ՍՊԸ** |
| ք.Աբովյան, Արզնու խճ. 10 | Ք.Եղվարդ, Սաֆարյան 15 |
| «Կենտրոնական գանձապետարան» | «Արարատբանկ » ԲԲԸ |
| ՀՀ 900018005190 | ՀՀ 1510017371551598 |
| ՀՎՀՀ 01243384 | ՀՎՀՀ 03307946 |
| Հեռ. +37422220011 | Հեռ.098181111 |
| ntbccarm@gmail.com | էլ. փոստ՝ exvardnektar@mail.ru |
| **Տնօրեն Վահե Հակոբյան** | **Տնօրեն՝ Ռուբեն Մկրտչյան** |
| ------------------------------------------ | ------------------------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3
«23» 10 2024 թ. կնքված
N ԹԱԿ-ԳՀԾՁԲ-25/07 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_______________
_______________
գտնվելու վայրը _______________
հհ _______________
հվհհ _______________

Պատվիրատու
_______________
_______________
գտնվելու վայրը _______________
հհ_______________
հվհհ_______________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«23» 10 2024թ. կնքված
N ԹԱԿ-ԳՀԾՁԲ-25/07 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____________________ -ին կնքված N _____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն